նիցիմ՝ մեծ շահ է իւր. չունիմ խիղճ ի մտի. երթայց և զարզս ես ինքնին տաց արքայի և սոքա վկայ են և երաշխաւորք[1]) բանի: Եւ առ նոսա պատասխանեաց թէ Բարի է միտք ձեր, և ի վերայ ուխտի ձերում կացջիք և տեսէք զպատրաստութիւն ձեր զի երթիցեմք: Եւ նոքա ասեն՝ Այո՛, տեսանիցեմք: Եւ բերին զՄուրթազան առ նա և համբուրին զմիմեամբք, և անդ ի բանակն առնէ Հասանն պատիւս նորա ընթրեաց և քաղաքացոցն մեծամեծաց: Մուրթազան ևս տեսեալ պատրաստութիւն և հրաւիրեալ կոչէ զնոսա ի պատիւ ի ներս քաղաքին: Եւ զգնալն ոմանք ի մեծամեծաց Հասանին ոչ հաւանին այնմ, այլ Հասանն և նմանիքն նորա ոչ կասին, և մի ոմն ի մեծամեծացն մինչդեռ զգնայինն՝ ասէ. Մի՛ երթիցեմք, ո՛վ տէր, զարձի՛ր, մի՛ հաւատար զանձն քո ի ներքս քաղաքիդ, այլ թէ արասցեն պատիւս՝ առ ի բանակս մեր լիցի: Այսպէս ոչ հատանէ զխօսքն մինչ ի դրունս քաղաքին. եւ իբրեւ ոչ անսան, դառնայ այրն և ասէ. Մեղք ձեր ի գլուխ ձեր: Եւ մտանէ Հասանն իւրայնովքն և մեծամեծօք և իշխանօքն ի քաղաքն ի պատիւ Մուրթազին եւ քաղաքացոց. եւ նա ոչ տանի զնոսա զամենայն ի մի վայր, այլ բաժանէ զնոսա մեծամեծաց քաղաքին ընդ որոց և բան եղեալ է, որոց մի և որոց Բ: Եւ զՀասանն և զիւրքն սակաւուք առ իւր բերէ ի տան. և յետ հացին ի ժամանակ աղօթիցն որ յառաջագէմն պատրաստեալ էին զինքեանս, և անդէն ամենայն ոք առ իւր լեալսն յանկարծապէս արկեալ ի վերայ նոցա ձեռս և սպանանեն, և գլխեալ զլեշսն մի ի վերայ միոյ և կալեալ զամիկսն, զի պարան եղեալ յոտիցն և քաշեալ լնուլին ի տեղին (դաբաղ): Եւ կլինն Հասանին աղաչեաց զփաշայն զի թաղեսցի.

1) երեշխաւորք.